

կը զեղխէին, ինչպէս ակնարկեց Ման-
դակունին (աստ, 322):

7. — Նիւր մատաղի: — Ա. բոլոր ըն-
տանի ուտելի չորքոտանիք յարմար նիւ-
թեր էին այս կոչնոց, ինչպէս Հրէից մէջ
(Ղեւտ. ԻԲ, 19, 27): Ասոցմէ կը յիշէ
Մանդակունին խաշն կամ ոչխար, քօշ եւ
եզն (58): Տրդատ մատաղ ըրաւ «սպի-
տակ» զուարակաց, նոխազներու եւ գա-
ռանց բազմութիւն մը (Չեն. 48):

Հոս հետաքրքրական է անասնոց ապի-
տակ գոյնը, որ շարունակութիւնն է մեր-
ձաւոր հայ եւ պարսիկ հեթանոսական
սովորութեան, զոր տեսանք Խոսրովու եւ
Յագկերտի օրինակաց մէջ (աստ, 314):
Չենոբայ խմբագրիչը՝ որ Տրդատայ կը
վերագրէ այս գունով մատաղներ, հաւա-
նական է թէ այդ գաղափարին կը մղուէր
դեռ իւր ժամանակ՝ այն է է զարուն՝ տե-
ւող սովորութենէն, որ թէ տակաւին ո՞ր-
քան պահուեցաւ այնուհետեւ՝ յայտնի չէ:
Գիտենք՝ որ Հելլէնք ալ ծիսական խը-
տրութիւններ ունէին զոհից գոյներու մէջ
(Դար. Դ, 560-1):

Գիտելի է՝ որ թէ սա վերոյիշեալ եւ
թէ յաջորդ գլխոց մէջ յիշելի անասունք՝
առ հասարակ արու են: Եւ պիտի համո-
զուինք՝ թէ այս պատահական բան մը